ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 մարտի 2025 թվականի N 290-Ա

ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՎԵԼԻ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24 կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1066-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի 5-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Արգիշտի Մեխակյանի 2025 թվականի մարտի 21-ի թիվ N 01/14/02217-2025 գրությամբ ներկայացված եզրակացությունը և Ամբերդ գյուղի բնակիչներ Հերմինե Աղասու Դավթյանի, Ռուսյա Մնացականի Դավթյանի դիմումը:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հերմինե Աղասու Դավթյանին, Ռուսյա Մնացականի Դավթյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ամբերդ գյուղի վարչական տարածքում գտնվող 04-008-0114-0016 կադաստրային ծածկագրով 0.33 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության բազմամյա կորիզավոր տնկարկ գործառնական նշանակության բարձրարժեք հողատեսքը, փոխադրել ավելի ցածրարժեք հողատեսքի՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող գործառնական նշանակության:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Լ. ՅԱՅԼՈՅԱՆ**

2025թ. մարտի 21
Խոյ համայնք, գ. Գեղակերտ